Հաղթանակած գործ

Կարո Բրուտյանը հեռախոս էր ձեռք բերել «Վիվասել» ընկերությունից 84.900 ՀՀ դրամ արժեքով: Հեռախոսի շահագործման ընթացքում, երբ այն գտնվելիս է եղել երաշխիքային սպասարկման մեջ, ի հայտ է գալիս հեռախոսի էկրանի թերություն, ինչը թաքնված թերություն էր և ի հայտ չէր եկել գնման ժամանակ: Հեռախոսը տրվում է սպասարկման կենտրոն վերանորոգման համար, սակայն դրա վերանորոգումը հնարավոր չի լինում կատարել համապատասխան դետալի բացակայության պատճառով, ինչից հետո Կ. Բրուտյանի կողմից առաջարկվում է իր նախընտրած մոդելի հեռախոսի ձեռք բերման տարբերակ՝ գների տարբերությունը վճարելու պայմանով, ինչից ընկերությունը հրաժարվում է: Կ. Բրուտյանը պահանջում է ետ վերադարձնել հեռախոսի համար վճարված գումարը, ինչը կատարելուց «Վիվասել» ընկերությունը հրաժարվում է և վերջինս հարկադրված դիմում է իր իրավունքների դատական պաշտպանությանը, ինչն էլ ստանձնում է **փաստաբան Կարեն Հովհաննիսյանը (փաստաբանական արտոնագիր թիվ 1212)**:

Փաստաբան Հովհաննիսյանը հայցադիմում է ներկայացնում ընդհանուր իրավասության դատարան և դատարանի կայացված վճռով հայցը բավարարվում է ամբողջությամբ: Վճիռը չի բողոքարկվում է ստանում է օրինական ուժ:

Արդյունքում Կ. Բրուտյանը ոչ միայն դատական կարգով հետ է ստանում անորակ հեռախոսի համար իր վճարած գումարը, այլ նաև ստանում է գումարային փոխհատուցում ընդհանուր առմամբ 425.000 ՀՀ դրամի չափով: